# ՆԱՒԹԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

ՖՐԻԴՈՆ ՄԱՐԴԱՆԵԱՆԻ

## II

### ԲԻԲԻ-ԷՅԲԱԹԻ ՊԵՏԱԿԱՆ ՆԱՒԹԱՅԻՆ ՀՈՂԵՐԻ ԱՃՈՒՐԴԸ

16—18 *փետրուարի* 1899 *թ.*

16—18 *փետրուարի Բագւայ արքունական պալատի դահլիճում տեղի ունեցաւ Բիբի-Էյբաթի պետական նաւթային հողերի աճուրդը։*

*Ինչպէս գուշակել էինք՝ աճուրդը չափ բազմամարդ և աղմկալի էր։ Աճուրդին բացի տեղական արդիւնագործներից մասնակցում էին նաև մեծ թւով օտար քաղաքացիներ, նոյն իսկ մայրաքաղաքներից եկած վաճառականներ։*

*Համաձայն նախնական յայտարարութեան՝* 16-*ին փետրուարի կէսօրեայ ժամի* 11-*ից Բագւայ նահանգի և Դաղստանի շրջանի պետական կալուածների կառավարիչ պ. Շապոշնիկովը, ներկայութեամբ Կովկասի լեռնային վարչութեան* II *շրջանի կառավարիչ պ. Գաւրիլովի և այլ աստիճանաւորների, սկսեց աճուրդին մասնակցողներից ընդունել ծրարների մէջ փակած յայտարարութիւնները իրանց կանխավճարով։* $12\frac{1}{2}$ *ժամին դահլիճ մտաւ տեղիս նահանգապետ պ. Ռոզէ աճուրդին նախագահելու։ Մինչ այդ ժամանակ ներկայացրած էին մօտ* 170 *փակած ծրարներ և դրամ մօտաւորապէս* 4—5 *միլիոն ռուբլի։ Ուղիղ ժամը մէկին նահանգապետը դիմելով հասարակութեան հարցրեց՝ արդեօք ոչ ոք այլ ևս ներկայացնելու յայտարարութիւն չունի. և հինգ րոպէ անցնելուց յետ, երբ նոր յայտարարութիւններ ներկայացնող չեղաւ, նորից խօսեց և յայտնեց, որ աճուրդի նիստը արդէն բացուած է համարում և այլ ևս յայտարարութիւններ չեն ընդունելու։*

*Դահլիճը լի էր խուռն բազմութեամբ, զանազան դասակարգի և ազգութիւնների պատկանող մարդկանցով։ Ասեղ գցելու տեղ չկար բառի*

բուն նշանակութեամբ։ Մի քանի ոստիկաններ պահպանում էին կարգը՝ աճուրդին մասնակցողների հետ վարւելով ոչ այնքան էլ քաղաքավարի։ Ամենքն էլ աշխատում էին քիչ մօտ լինել նահանգապետի սեղանին, որպէս գի լաւ լսէին թէ ով, ինչ գին, որ № հողի համար առաջարկեց և նշանակէին նախապէս ձեռքներին պատրաստած թղթերի վրայ. սակայն զուր աշխատանք. դահլիճում տեղ չկար ոչ առաջ և ոչ էլ ետ գնալու։ Եւ այդպէս օրօրւում էր մարդկային պատը։ Մի տարօրինակ անհամբերութիւն, հոգեկան կռիւ էր արտայայտում դահլիճում գտնւող հասարակութեան դէմքը։ Աճուրդի նիստը բացւած համարելուց մինչև առաջին ծրարը բանալը մի խորին գերեզմանական լռութիւն տիրեց դահլիճում, որը խանգարւում էր ծրարի թուղթը կտրելու ձայնով։

Մենք մեր միտքը ընդհատւած չէինք համարիլ, եթէ այստեղ մի քիչ ընդարձակ կերպով առաջ բերէինք, թէ ինչ կտոր հող որքան տարածութեամբ է և ամեն մինի համար որքան պէտք է վճարւի արքունի գանձարանին։

| Հողերի №№ | Տարածութիւնը։ | | | | Տարեկան պարտաւորիչ քանակութիւնը փութերով։ | |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | 4 | դեսեատինա | 1.070 | քառ. ս. | 890.000 | փութ |
| 2 | 4 | » | 1.400 | » | 930.000 | » |
| 3 | 5 | » | 760 | » | 160.000 | » |
| 4 | 3 | » | 1.670 | » | 740.000 | » |
| 5 | 4 | » | 200 | » | 1.090.000 | » |
| 6 | 3 | » | 2.340 | » | 1.590.000 | » |
| 7 | 3 | » | 1.150 | » | 1.390.000 | » |
| 8 | 3 | » | 300 | » | 1.250.000 | » |
| 9 | 3 | » | 1.930 | » | 760.000 | » |
| 10 | 4 | » | 2.340 | » | 1.990.000 | » |
| 11 | 3 | » | 1.960 | » | 1.530.000 | » |
| 12 | 1 | » | 400 | » | 470 000 | » |
| 13 | 5 | » | 1.870 | » | 1.460.000 | » |
| 14 | 6 | » | 1.610 | » | 1.410.000 | » |
| 15 | 7 | » | 1.743 | » | 1.620.000 | » |
| 16 | 8 | » | 840 | » | 1.660.000 | » |
| 17 | 8 | » | 1.810 | » | 1.910 000 | » |
| 45 | 4 | » | 906 | » | 1.750.000 | » |
| 46 | 3 | » | 1.980 | » | 1.530.000 | » |
| 47 | 3 | » | 1.980 | » | 1.530.000 | » |
| 48 | 4 | » | 855 | » | 1.740.000 | » |
| 49 | 3 | » | 1.130 | » | 1.390.000 | » |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 50 | 3 | » | 1.980 | » | 1.530.000 | » |
| 51 | 3 | » | 1.980 | » | 1.530.000 | » |
| 52 | 3 | » | 1.370 | » | 1.430.000 | » |
| 54 | 5 | » | 165 | » | 2.030.000 | » |
| 55 | 5 | » | 617 | » | 2.100.000 | » |
| 56 | 4 | » | 1.098 | » | 1.780.000 | » |
| 57 | 5 | » | 2.320 | » | 2.390.000 | » |

*Առաջին բացած ծրարը Զուբալովի ներկայացրածն էր։ Նա իւր հանքին կից № 12 կտոր հողի համար առաջարկել է 11³/₄ կոպէկ փութավճար և № 8-ի համար 9 կոպէկ։ Աճուրդում ներկայ գտնւողների վրայ կարծես ջուր մաղւեց։ Բոլորն էլ զարմացած իրար երես էին նայում, իսկ մի քանի միամիտներ նոյն իսկ չը կարողացան զսպել իրանց ծիծաղը և Զուբալովին ակամայ կերպով չիմար անւանել։ Սակայն մենք այդպիսի գներ նախազգուշակում էինք Զուբալովի և Վիշաուի կողմից, թէպէտ այդ վերջինը ինչպէս ներքև կը տեսնենք մեծ գներ չի առաջարկել՝ և անկեղծ խոստովանում ենք, եթէ Զուբալովը նոյն իսկ առաջարկէր 15 կոպէկ փութավճար, զարձեալ նրան ձեռնտու է և զարմանալու բան չկայ. ահա թէ ինչու։ Զուբալովի հռչակաւոր նաւթային հանքը դարձեալ պետական հող է, սակայն բոլորովին ուրիշ պայմաններով է վերցրած արդիւնագործելու։ Նրա հռչակաւոր հանքը տարածւած է 8 դեսեատինա հողի վրայ, որի իւրաքանչիւր դեսեատինայի համար նա իւրաքանչիւր տարի վճարում է պետական գանձարանին միմիայն 100 ռուբ., իսկ 8 դեսեատինայի համար 800 ռ.։ Ինչպէս տեսնում էք վերը զետեղած ցուցակից № 8 կտոր հողի արդիւնաբերելիք պարտաւորիչ քանակութիւնն է 10.25.000 փութ, իսկ № 12—470.000 փթ.։ Առաջինի համար Զուբալովը փութավճար է նշանակել 9 կոպ., իսկ երկրորդի համար 11³/₄ կոպէկ. ուրեմն Զուբալովի տարեկան պարտաւորիչ վճարը պետական գանձարանին է (9× 1.250.000)+(11³/₄×470.000)+800=112.500+55.225+800=168.525ր. Վերջին երկու-երեք տարին Զուբալովը տարեկան իւր հանքից արդիւնաբերել է 35—40 միլիոն փութ նաւթ։ Ենթադրենք՝ որ, սկսելով արդիւնագործել աճուրդում վերցրած նոր 4 դեսեատինա 700 սաժէն հողը, նրա արդիւնաբերելիք նաւթի քանակութիւնը չի աւելանայ, (որ շատ կասկածելի է, որովհետև այդ նոր հողի վրայ նա կարող է փորել նոր հորեր առնւազն 50 հատ, որից կարող է ստանալ առնւազն 50 հազար փութ նաւթ օրեկան), հետևապէս պետական գանձարանին վճարելիք 168.525 ռ. եթէ բաժանենք ստացած նաւթի քանակութեան վրայ՝ այսինքն 40 միլիոնի, կը տեսնենք որ Զուբալովը փութավճար է տալիս միմիայն 0,42 կոպ., մի չնչին վճար, որը 13 դեսեատինա նաւթային հող արդիւնագործելիս շատ աննշան դեր կը կատարի։ Թող Զուբալով 0,42 կոպ. փութավճարի փոխա-*

նակ վճարէ թէկուզ 4.2 կոպ. այսինքն տասը անգամ աւել, դարձեալ նա կը շահի։ Բացի դորանից Զուբալովը՝ նշանակելով այդ բոլոր երեւոյթին առասպելական գները, մի այլ հանգամանք էլ անշուշտ ի նկատի է ունեցել՝ այն է որ ուրիշ արդիւնագործներ իրան չը կցւին, որպէս զի իւր հանքի հարստութիւններով միմիայն ինքը օգտուի։ Նոյն պայմանների մէջ է գըտնւում և Վիշաուի հանքը։ Նա ևս կարող էր այդ տեսակ մեծ գներ առաջարկել իւր հանքին կից հողերի համար, սակայն չի արել, կարծելով երեւի՝ որ ուրիշները նրանից վախենալով չեն մօտենալ այդ հողերին։ Սակայն գտնւել են բախտաւորներ, որոնք կարողացել են նրան հարեան հողերը աճուրդում վերցնել։ Ինչ վերաբերում է նոր մարդկանց գալուն այստեղ և 8—9 կոպ. փութավճարով հողը արդիւնագործելուն՝ այդ աւելի քան անմտութիւն է, և ինչպէս տեղական լրագիրը շատ ճիշտ նկատեց, այդպիսիները փոխանակ նաւթի հոր փորելու, փորում են իրանց համար գերեզմաններ, ուր կենդանի կը թաղւին։

Աճուրդը տևեց ամբողջ երեք օր, նախ այն պատճառով որ մասնակցողներ շատ կային, երկրորդ՝ փողերի համրելը բաւականին մեծ ժամանակ էր խլում, մանաւանդ ոսկի փողը։ Մի քանիսը բաւականին գործնական միջոցի էին դիմել. կանխավճարը մուցրել էին պետական գանձարանը, իսկ անդորրագիրը ներկայացրել յայտարարութեան հետ։ Այդ հանգամանքը ցանկալի է ուշադրութեան առնել, որպէս զի ապագայ աճուրդներին փողի համրելը ժամանակ չըխլի։

Ներքև մենք առաջ ենք բերում ցուցակը այն բոլոր գների, որ առաջարկւեցան Բիբի-էյբաթի հողերի համար ներկայ աճուրդին։

(Տես չորրորդ էջը)

| | Հողերի №№ / Մասնակցողները | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 1… |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Զուբալով . . . . . . . . . . | — | — | — | — | — | — | — | 9 | — | — | — |
| 2 | Ջակելի և Ռիժանսկի. . . . . | 3,615 | — | — | — | 3,251 | — | 5,305 | — | 2,611 | — | 6,… |
| 3 | Բարոն Վրանգել . . . . . . . | — | — | — | — | — | — | — | 4,2 | — | — | — |
| 4 | Կլապցով. . . . . . . . | — | — | — | — | 2,1 | — | — | — | 3,25 | — | — |
| 5 | Բագւայ նաւթ. և առևտ. ընկ. | — | — | — | — | — | — | — | — | — | — | — |
| 6 | Ռուս-Կովկասեան նաւթ. ընկ. | — | — | — | — | 2,287 | — | 5,316 | — | 2,326 | — | 5,3… |
| 7 | Ընկ. Եղբ. Նոբել . . . . . | — | — | — | — | — | $1^{11}/_{21}$ | $3^{1}/_{21}$ | — | — | $3^{1}/_{21}$ | $1^{11}$… |
| 8 | Հիւսէյնով Մամեդ Բագիր . . | — | — | — | — | — | — | — | — | — | — | — |
| 9 | Ստալնով Ա.. . . . . . . | — | — | — | — | — | — | — | — | — | — | — |
| 10 | Բունիաթեան, Սերգէեան և Յակոբեան . . . . . . . | 3,16 | — | — | — | 1,94 | — | 5,43 | 6,82 | — | — | 6,… |
| 11 | Խ. Գրուբիշիչ . . . . . . | — | — | — | — | — | — | — | 7,40 | — | — | — |
| 12 | Ի. Գ. Գալպերին . . . . . | $2^{1}/_{8}$ | — | — | — | — | — | — | — | — | — | — |
| 13 | «Բախտ» ընկերութիւն . . . | — | — | — | — | — | 4,26 | 4,29 | — | — | 4,27 | 4,3… |
| 14 | Ա. Ի. Աղամեան և Դ Իպբաշեան | — | — | — | — | — | — | — | — | — | — | — |
| 15 | Բէրնէ, Մէյսներ և Կվանտրեմ | — | — | — | — | — | — | — | 7,31 | — | — | — |
| 16 | Մ. Տէր-Գասպարեան. . . . | — | — | — | — | — | — | 5,5 | $5^{5}/_{8}$ | — | — | — |
| 17 | Հանիֆա խան Հիւսէյնով և Ալեք. Հիւսէյնով . . . . . . . . | — | — | — | — | — | — | — | — | — | — | — |
| 18 | Ռուսաց նաւթ. ընկերութիւն. | — | — | — | — | 2,51 | — | 5,855 | 6,175 | — | — | 6,27… |
| 19 | Դոյնիկով, Նասչէև և Տարուսով | — | — | — | — | — | — | — | — | — | — | — |
| 20 | Հանիֆա խան Հիւսէյնով և Ալի Հիւսէյնով. . . . . . | — | — | — | — | — | — | 7,27 | — | — | — | 6,02… |
| 21 | Հանիֆա խան Հիւսէյնով և Հաջի Սկանդարով . . . . . | — | — | — | — | — | — | — | — | — | — | — |
| 22 | Ջանումեան և Թումանեան . . | 1,01 | 0,95 | — | — | 1,03 | 1,81 | 3,67 | 5,29 | 1,09 | 1,49 | 3,69… |
| 23 | Օտարով և Ասլանով . . . . | — | — | — | — | — | — | 5,77 | — | 3,07 | — | — |
| 24 | Մուրթուզա Մուխտարով. . . | — | — | — | — | 2,5 | — | — | — | — | — | — |
| 25 | Շումախէր Մ. . . . . . . . | 4,02 | — | — | — | — | — | $3^{1}/_{8}$ | $6^{1}/_{8}$ | — | 5,02 | — |
| 26 | Սմբատ Բուդաղեան . . . . | — | — | — | — | — | — | — | — | — | — | — |
| 27 | Փիթոյեան և ընկերութիւն. . | 2,205 | — | — | — | — | — | — | — | 1,52 | — | 5,88… |
| 28 | Ա. Ի. Կլէյն . . . . . . . . | — | — | — | — | — | 4,25 | — | — | — | — | — |
| 29 | Շիբաև և ընկերութիւն . . . | — | — | — | — | — | — | — | — | — | — | 6,2… |

| 1 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 45 | 46 | 47 | 48 | 49 | 50 | 51 | 52 | 54 | 55 | 56 | 57 |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1/4 | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — |
| | — | — | — | — | — | — | — | 6,535 | — | — | — | — | — | — | — | — | — |
| | — | — | 1,16 | — | — | 6,33 | 4,75 | 4,55 | 2,11 | — | 5,11 | — | — | — | — | — | — |
| | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — |
| 2 | 2,76 | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — |
| | — | — | — | — | — | 4,876 | 4,766 | — | — | — | 5,183 | — | — | — | — | — | — |
| | — | — | — | — | — | 1 11/21 | 1 11/21 | 1 11/21 | 1 11/21 | 1 11/21 | 1 11/21 | 1 11/21 | 1 11/21 | 1 11/22 | 1 11/21 | 1 11/21 | 1 11/21 |
| | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — |
| | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — |
| - | 2,4 | — | — | — | — | — | 6,75 | 6,03 | — | — | 6,8 | — | — | — | — | — | — |
| - | — | — | — | — | — | 6,82 | 6,72 | — | — | — | — | — | — | — | — | — | — |
| - | 1 1/16 | 7/8 | — | — | — | 5 7/8 | — | — | — | — | — | — | — | — | — | — | — |
| - | 7/8 | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — |
| — | — | — | — | — | — | 4,52 | 4,5 | 4,02 | 3,5 | — | — | — | — | — | — | — | — |
| — | — | — | 1,62 | 1,65 | — | 6,18 | — | — | — | — | — | — | — | — | — | — | — |
| — | — | — | — | — | — | — | 5 3/8 | — | — | 3 1/8 | — | — | — | — | 4 3/8 | — | — |
| — | — | — | — | — | — | — | — | — | — | — | 6,02 | — | — | — | — | — | — |
| — | — | — | — | — | — | 6,5 | 6,5 | 5,005 | — | — | 5,85 | — | — | 6,175 | — | — | — |
| 326 | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — |
| 1/8 | — | 1,12 | — | 0,78 | 1,62 | — | 4,26 | — | — | — | — | — | — | — | — | — | — |
| — | — | — | — | — | — | — | — | 4,14 | — | — | — | — | — | — | — | — | — |
| …007 | 0,61 | 0,57 | 0,53 | 0,59 | 0,55 | 5,03 | 4,85 | 2,17 | 1,21 | 1,26 | 2,63 | 5,01 | 5,19 | 3,99 | 1,99 | 1,87 | — |
| — | — | — | — | — | — | — | 6,66 | 5,93 | — | — | — | — | — | — | — | — | — |
| — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — |
| 1/8 | 2,0 | 1,75 | 1,5 | 1,25 | 1,25 | 3 1/8 | 3 1/8 | 3 1/8 | — | 2,0 | 4,75 | 5 1/8 | 5 1/8 | 7,26 | 4,02 | 5,02 | 7,26 |
| 1/16 | — | — | — | — | — | 3,27 | 4,01 | 4,94 | 3,93 | — | — | — | 3,82 | — | — | — | — |
| — | — | — | — | — | — | — | 5,17 | 4,38 | — | — | — | — | — | — | — | — | — |
| — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — |
| — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — |

| | Հողերի №№ / Մասնակցողներ | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 1 |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 30 | Վիլլօնկին Ն. Մ. . . . . . . | — | 5,2 | — | — | 1,03 | — | — | 6,22 | 4,3 | — | — |
| 31 | Ջանկելի . . . . . . . . . | 3,77 | — | — | — | — | — | — | — | — | — | — |
| 32 | Մանուէլեան Մ. Ա. . . . . . . | — | — | — | — | — | — | — | — | — | — | — |
| 33 | Նարաթեան Եղբ. . . . . . . | — | — | — | — | — | — | — | — | — | — | — |
| 34 | Ա. Միլով և Փրիդոնեան. . . . | — | — | — | — | — | — | — | 7,01 | — | — | — |
| 35 | Մկ. Քալանթարեան . . . . . | — | — | — | — | — | 3,65 | 4,65 | — | — | — | 5,6 |
| 36 | Կոլբերգ . . . . . . . . . | — | — | — | — | — | — | — | — | — | — | — |
| 37 | Գ. Խանդամիրեան. . . . . . | 3,53 | — | — | — | — | — | — | — | — | — | — |
| 38 | Մ. Ղուկասեան և Բ. Տագիդանեան. . . . . . . . . . | — | — | — | 1,21 | 3,26 | — | — | — | — | — | — |
| 39 | Յ. Ծատուրեան . . . . . . . | 2,93 | — | — | — | — | — | 5,6 | 6,51 | 1,01 | — | — |
| 40 | Կասպեան ընկերութիւն . . . | 3,21 | 2,8 | 3,18 | 0,74 | 3,09 | 3,18 | 4,15 | 5,45 | 3,21 | 3,98 | — |
| 41 | Օ. Աւետիսեան . . . . . . . | 6,17 | — | — | — | — | — | — | — | — | — | — |
| 42 | Եղբ. Օտարովներ . . . . . . | — | 3,39 | — | — | — | — | — | — | — | — | — |
| 43 | Ծովիանով և Բիխովսկի . . . | — | — | — | — | — | — | — | — | — | — | — |
| 44 | Արաֆելեան Գ. Մ.. . . . . . | — | — | — | — | — | — | — | 6,75 | — | — | — |
| 45 | Մանթաշեան և ընկ. . . . . . | — | 2,03 | — | — | 1,78 | — | — | 4,14 | — | 3,77 | 3,7 |
| 46 | Եղբ. Դեմբոտ . . . . . . . . | 3,07 | 2,90 | ,62 | 1,75 | — | — | ,82 | — | 2,47 | — | — |
| 47 | «Որոտան» ընկ. . . . . . . . | 3,10 | — | — | — | 1,25 | — | — | 6,0 | — | — | 4, |
| 48 | Վեզիրով Ֆ. . . . . . . . . | — | — | — | — | — | — | — | — | — | — | — |
| 49 | Նաղիև Մուսա. . . . . . . . | — | — | — | — | — | — | — | — | — | — | 5,11 |
| 50 | Իշխ. Դադիանի . . . . . . . | — | — | — | — | — | — | — | 6,26 | — | — | — |
| 51 | Ն. Աբելեան և Բ. Իզբաշեան. | — | — | 3,21 | — | — | — | — | — | — | — | — |
| 52 | Ս. Կուսիս. . . . . . . . . | — | — | — | — | — | — | — | 2,12 | — | — | — |
| 53 | Եասպի-սեծովեան նաւթային և առևտրական ընկ.. . . . . | 2,1 | 1,78 | 1,58 | 1,26 | 1,58 | 3,26 | 4,1 | 6,79 | 1,26 | 4,1 | 4,5 |
| 54 | Ս. Գ. Դիլդարեան . . . . . . | — | — | — | — | — | — | — | — | — | — | — |
| 55 | Քելբալայ Նաջաֆ Կուլի Սադիխով . . . . . . . . . . . | 5,14 | — | — | — | — | — | — | — | — | — | 6,6 |
| 56 | Հ. Մելիքեան և Յ. Ադամեան . | — | — | — | — | — | — | — | — | — | — | — |
| 57 | Զէյնալով և Ախունդով . . . . | — | — | — | — | — | — | — | — | — | — | — |
| 58 | Աւետիսով, Մարտիրոսով, Եղիազարով, Ջալաբով և Այվազեան. | — | — | — | — | — | — | — | — | — | 7,95 | — |

| 13 | 14 | 15 | 16 | 17 | 45 | 46 | 47 | 48 | 49 | 50 | 51 | 52 | 54 | 55 | 56 | 57 |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 4,8 | — | 2,27 | 1,27 | — | — | — | — | 5,4 | 3,12 | — | — | 4,12 | — | — | — | — |
| — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — |
| — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — |
| — | — | — | — | — | — | 3,8 | 5,2 | — | — | — | 5,8 | | — | — | — | — |
| | | | | | | | | | | | 5,8 | 6,35 | | | | |
| — | — | — | — | — | — | — | — | — | — | — | | | — | — | — | — |
| — | — | — | — | — | 5,65 | 5,65 | 4,65 | 2,65 | 3,65 | — | — | — | — | 5,65 | — | — |
| — | — | — | — | — | — | 6,16 | — | — | — | — | — | — | — | — | — | — |
| — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — |
| 3,21 | — | — | — | — | — | — | 6,91 | — | — | — | — | — | — | — | — | — |
| — | — | — | — | — | — | 5,62 | 4,06 | — | 3,5 | — | — | — | — | — | — | — |
| 0,55 | — | — | 0,62 | — | 5,71 | 4,01 | 3,198 | — | — | 3,98 | — | — | 4,06 | 3,334 | — | — |
| — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — |
| — | — | — | — | — | 6,78 | — | — | — | — | — | — | — | — | — | — | — |
| 2,37 | 3,59 | 2,78 | — | — | — | — | — | 4,29 | 4,76 | — | — | — | — | — | — | — |
| — | — | — | — | — | ,25 | — | — | — | — | — | — | — | — | — | — | — |
| 0,66 | 0,66 | — | — | — | 4,14 | — | — | — | — | — | — | — | 4,26 | — | 3,78 | — |
| 2,7 | 1,5 | — | — | — | — | 4,27 | — | — | — | 4,17 | 5,12 | — | — | 3,57 | — | — |
| — | — | 1,25 | 1,7 | — | 6,7 | 5,25 | 5,5 | 5,0 | — | — | — | 6,0 | — | — | 4,0 | — |
| — | — | — | — | — | — | 5, | ,03 | — | — | — | — | — | — | 5,61 | — | — |
| — | — | — | — | 3,06 | 6,16 | — | — | — | 6,09 | 6,19 | — | — | — | — | — | — |
| — | — | — | 1,57 | — | — | — | — | 4,7 | — | — | — | — | — | — | — | — |
| — | — | — | — | — | — | — | 4,71 | — | — | — | — | — | — | — | — | — |
| — | — | — | — | — | 3,21 | — | — | — | — | 3,06 | — | — | — | — | — | — |
| 1,26 | 1,26 | 0,78 | 0,78 | 0,78 | 5,15 | 6,27 | 4,26 | 2,78 | 2,78 | 4,26 | 5,78 | 5,78 | 4,26 | 3,26 | 3,26 | 5,15 |
| — | — | — | — | — | — | — | 5,77 | — | 5,51 | — | — | — | — | — | — | — |
| — | — | — | — | — | 6,63 | — | — | — | — | — | — | — | — | — | — | — |
| — | — | 2,56 | — | — | — | 6,03 | — | — | — | 6,52 | — | — | — | — | — | — |
| — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — |
| — | — | — | — | — | — | — | 6,8 | 5,1 | — | — | — | — | 8,5 | — | — | — |

| | Հողերի №№ / Մասնակցողները | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 59 | Ղորղանով Ա. Բ. . . . . . . | — | — | — | — | — | — | — | — | — | — | — |
| 60 | Հիւսէյնով և Սկանդարով . . . | — | — | — | $0_{,52}$ | — | — | — | — | — | — | — |
| 61 | Ասադուլլա և Շամշի . . . . . | — | — | — | — | — | — | — | — | — | — | — |
| 62 | Բագւայ Նաւթ. և առևտ. ընկ. | — | — | — | — | $4_{,10}$ | $5_{,10}$ | — | $6_{,13}$ | — | — | — |
| 63 | Հանիֆա խան Հիւսէյնով և Ագլիմ Սկանդարով . . . . . . . | — | — | — | — | — | — | — | — | — | — | — |
| 64 | Խ. Գ. Թումայեան . . . . . . | — | — | — | — | — | — | — | $7_{,10}$ | — | — | — |
| 65 | Իշխ. Ն. Վ. Լորդկիպանիձէ. . | — | — | — | — | — | — | — | — | — | — | — |
| 66 | Ս. Տէր-Օհանեան և Մարգարեանց | $4_{,63}$ | — | — | — | — | — | — | $7_{,77}$ | — | — | — |
| 67 | Բէնկէնդորֆ Ա. . . . . . . . | — | — | — | — | — | — | $4_{,51}$ | — | — | — | — |
| 68 | Յ. Թումանեան և ընկ. . . . . | — | — | — | — | — | — | $5_{,53}$ | $5_{,17}$ | — | — | 5,[illegible] |
| 69 | Դելիանով Վ. Խ. . . . . . . . | $3_{,103}$ | — | — | — | $4_{,279}$ | — | — | — | — | — | — |
| 70 | Սոլոմոն և Խատիսեան . . . . | $3_{,782}$ | — | — | $1_{,782}$ | $2_{,732}$ | — | — | $8_{,1282}$ | $2_{,582}$ | $5_{,555}$ | 7,[illegible] |
| 71 | Բաստամեան Լ. . . . . . . . | — | — | — | — | — | — | — | — | — | — | — |
| 72 | Մկրտումով . . . . . . . . . | — | — | — | — | — | — | — | — | — | — | — |
| 73 | Բալախանեան Նաւթ. ընկ. . . | $4_{,19}$ | — | — | — | — | — | — | — | — | — | 7,[illegible] |
| 74 | Սարումեան և Ճգնաւորեան. . | — | — | — | — | — | — | — | — | — | — | — |
| 75 | Ն. Եղիազարեան և Այվազեան. | $2_{,52}$ | — | — | — | $^5/_8$ | — | — | — | — | $4_{,28}$ | — |
| 76 | Մելիք-Շահնազարեան . . . . | — | — | — | — | — | — | — | — | — | — | — |
| 77 | Քերբալայ Նաջաֆկուլի Սադիխով . . . . . . . . . . | — | — | — | — | — | — | — | — | — | — | — |
| 78 | Դիլգարեան Ս. . Գ. . . . . . . | — | — | $1_{,5}$ | — | — | — | — | — | — | — | — |
| 79 | «Տարօն» ընկ. և Զ. Յակոբեան . | — | — | — | — | — | — | — | — | — | — | — |
| 80 | Եղբ. Կրասիլնիկեան և Ս. Արաֆելեան . . . . . . . . | — | — | — | — | — | — | — | — | — | — | — |
| 81 | Կ. Դ. Պօղոսեան . . . . . . | $3_{,0}$ | — | — | — | — | — | — | — | — | — | — |
| 82 | Կոլեսնիկով Ի. Ֆ . . . . . . | $2_{,9}$ | — | — | — | — | — | — | — | — | — | — |
| 83 | Զգլենիցկի . . . . . . . . . | $4_{,881}$ | — | — | — | $1_{,75}$ | — | — | — | — | — | — |
| 84 | Լիանոզով . . . . . . . . . | — | — | — | — | — | — | — | $4_{,0}$ | — | — | — |

| 13 | 14 | 15 | 16 | 17 | 45 | 46 | 47 | 48 | 49 | 50 | 51 | 52 | 54 | 55 | 56 | 57 |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | 8,25 |
| — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — |
| — | — | — | — | — | — | — | 4,75 | — | — | 5,5 | — | — | — | — | — | — |
| — | — | — | — | — | 7,1 | 8,0 | — | — | — | — | — | — | — | — | — | — |
| — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | 2,02 | — | — |
| — | — | — | — | — | 7,0 | — | — | — | — | — | — | — | — | — | — | — |
| — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — |
| — | — | — | — | — | — | — | — | — | 5,14 | — | — | — | — | — | — | — |
| — | — | — | — | — | — | — | 4,51 | — | — | — | — | — | — | — | — | — |
| — | — | — | — | — | — | 5,13 | — | — | — | 4,67 | — | — | — | — | — | — |
| — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — |
| — | 2,582 | — | 0,382 | — | — | 7,382 | 7,128 | 3,024 | 4,338 | 6,188 | — | — | — | — | — | — |
| — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — |
| — | — | — | — | — | — | 6,36 | — | — | — | — | — | — | — | — | — | — |
| — | — | — | 2,87 | — | — | — | 6,37 | — | — | — | — | — | — | — | — | — |
| — | — | — | — | — | — | 6,51 | — | — | — | — | — | — | — | — | — | — |
| 1¹/8 | — | — | — | — | 5,34 | — | 4,35 | — | — | — | — | — | — | — | 4,02 | — |
| — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — |
| — | 1,3 | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — |
| — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — |
| 4,27 | — | — | — | 4,81 | 8,03 | — | — | — | — | — | — | — | — | — | — | — |
| — | — | — | — | — | — | 5,0 | — | — | — | — | — | — | — | — | — | — |
| — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — |
| 2,27 | — | — | — | — | — | — | — | — | 4,34 | — | — | — | — | — | — | — |
| — | — | — | — | — | — | — | — | — | 5,1 | — | — | — | — | — | — | — |
| — | 0,75 | — | — | — | 3,1 | 3,1 | 3,1 | 2,1 | 2,1 | 3,1 | — | 3,1 | — | 2,6 | 2,6 | — |

Մեր առաջ բերած ցուցակից երեւում է, որ ամենաթանկ գներ առաջարկել են.

| | | |
|---|---|---|
| № 1 | Աւետիսեան | 6,17 կոպ. |
| 2 | Վէլլինկի | 5,2 |
| 3 | Աբելեան և Իւզբաշեան | 3,21 |
| 4 | Սոլոմոն և Խատիսեան | 1,782 |
| 5 | Գելլիանով | 4,279 |
| 6 | Բագւայ Նաւթային Ընկ. | 5,0 |
| 7 | Հանիֆա խան Հիւսէյնով | 7,27 |
| 8 | Ջուբալով | 9,0 |
| 9 | Վիլլինկի | 4,3 |
| 10 | Աւետիսեան, Մարտիրոսեան և այլք | 7,95 |
| 11 | Սոլոմոն և Խատիսեան | 7,128 |
| 12 | Ջուբալով | $11\,^3/_4$ |
| 13 | Վիլլինկի | 4,8 |
| 14 | Ծովիանով և Բէյխովսկի | 3,59 |
| 15 | » » | 2,78 |
| 16 | Բալախանի նաւթային ընկերութիւն | 2,87 |
| 17 | «Տարոն» ընկերութիւն | 4,81 |
| 45 | Յակոբեան Ջ. | 8,03 |
| 46 | Բագւայ Նաւթային Ընկերութիւն | 8,0 |
| 47 | Սոլոմոն և Խատիսեան | 7,128 |
| 48 | Վիլլինկի | 5,4 |
| 49 | Մուսա Նաղիեւ | 6,09 |
| 50 | Բունիաթեան և այլք | 6,8 |
| 51 | Նաբաթեան | 5,8 |
| 52 | Միլով և Փրիդոնով | 6,35 |
| 54 | Աւետիսեան, Մարտիրոսեան, և այլք | 8,5 |
| 55 | Մ. Քալանթար | 5,65 |
| 56 | Շումախեր | 5,02 |
| 57 | Ղորղանեան Ա. | 8,25 |

Ցուցակից նոյնպէս երեւում է որ № 51 կտոր հողի համար Նաբաթեանը և Ֆրիդոնեանը միեւնոյն գներն են առաջարկել, սակայն, ինչպէս այդպիսի դէպքերում օրէնքը թելադրում է, վիճակ գցեցին և բախտը Նաբաթեանին ժպտաց։ Ինչպէս վերը յիշեցի սոքա են ամենաբարձր գներ առաջարկողները և հաւանական է, որ սոցա վրայ էլ աճուրդը հաստատուի։ Սակայն լսում ենք, որ մի քանիսը շատ անբաւական են իրանց անմիտ քայլից և թէպէտ հողերը մնացել են իրանց վրայ, բայց և այնպէս կամենում են իրանց նախավճարից ձեռք քաշելով հրաժարուել այդ հողերից։

թանգ գներ առաջարկուած են տափարակ տեղերին, իսկ սարոտ տեղերին անհամեմատ էժան։ Մի քանիսին էլ յաջողուել է արդէն ծախել իրանց իրաւունքները վերցրած հողերի վերաբերմամբ։

Աճուրդին ներկայացրած յայտարարութիւնների մէջ կար նաև մի առանձին ուշադրութեան արժանի յայտարարութիւն մի ինչ որ անյայտ պարոն Ս. Կացի կողմից։ Այդ պարոնը խնդրում է իրա վրայ թողնել մի քանի կտոր հող 0.52 կոպ. փութավճարով, պարտաւորւելով արդիւնագործել այդ հողերը միմիայն ռուս դրամատէրերի, ռուս բանուորների, ռուս տեխնիկների միջոցով, առանց որ և է մասնակցութեան օտար էլեմենտների։ Բացի դորանից նա պարտաւորւում է բոլոր արքունական երկաթուղիներին վառելիք տալ արքունական հողերի վրայ գտնուած իւր սեպհական հանքերից փութը 6 կոպէկով. խոստանում է հայրենի արդիւնաբերութիւնը հասցնել իւր զարգացման գագաթնակէտին և այլ հազար ու մի խոստումներ անելուց յետոյ՝ դիմում է աճուրդի նիստին. եթէ այդ առաջարկութեան լուծումը նիստը գտնի իւր ձեռնհասութիւնից բարձր, այն ժամանակ խնդրում է ներկայացնել բարձր իշխանութեան հայեցողութեան։ Այդ առաջարկութիւնն ըստ պ. Կացի առանձին ուշադրութեան է արժանի ու կարօտ շուտափոյթ լուծման, որովհետև օտարազգիք շնորհիւ իրանց դրամագլխի արդէն կլանել են ամենահարուստ նաւթահանքերը, իսկ այդ չարիքի առաջը առնելու միակ միջոցը այն է, որ նաւթային հարուստ հողերը էժան գներով թողնեն միմիայն ազգով ռուս դրամատէրերի ձեռքին։ Տարօրինակ լոգիկա... Ես անկեղծ խոստովանում եմ, շատ հետաքրքրեցայ իմանալ այդ առաջարկութեան հեղինակի ով լինելը, որովհետև ոչ ոք դահլիճում գտնուողներից իւր ծիծաղը զսպել չըկարողացաւ. ինձ ասացին, որ հրէա է ծագումով, իսկ վերջերս ռուս դաւանութիւն ընդունած. թէ որքան ճիշտ վկայութիւն է այդ, չեմ կարող երաշխաւորել։

Այսպէս վերջացաւ Բիբի-Էյբաթի պետական նաւթային հողերի նշանաւոր աճուրդը։